





**ՄԱՐԴՈՒ ԿՐԱ ՆԵՐԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԱԿԱՆ ԼԱՐՄԱՆ, 50ԴՑ
ՀԱՃԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՍԱՆՔԻ ՈՒԺԻ ՍԱՀՄԱՆԱՑԻՆ ԱՐԺԵՂԵՐԸ**

	Անվտանագ սահմանը՝ մինչև 0.3մԱ
	Զգացվող՝ 1մԱ ÷ 3մԱ
	Մկանային ձգմամբ բաց չթողնող $\geq 10մԱ ÷ 15մԱ$
	Շնչառական համակարգի կաթված $\geq 60մԱ ÷ 80մԱ$
	Ֆիբրիլացիոն մահացու հոսանք $\geq 100մԱ$
Մրտի ակնթարթային կանգ $\geq 3Ա$	

1 կՎ-ից ցածր լարման էլեկտրատեղակայանքների TN խմբի Չրոյական պաշտպանիչ և գրոյական աշխատանքային հաղորդիչների մոնտաժման տեսակները

		
<p>TN-S: (PE) և (N) Չրոյական պաշտպանիչ և գրոյական աշխատանքային հաղորդիչները բաժանված են</p>	<p>TN-C: PE և N Չրոյական պաշտպանիչ և գրոյական աշխատանքային հաղորդիչները համատեղված են մեկ հաղորդչում՝ տրանսֆորմատորից մինչև սպառիչ</p>	<p>TN-C-S PEN Չրոյական պաշտպանիչ և գրոյական աշխատանքային հաղորդիչները համատեղված են համակարգի մասի մեկ հաղորդչում՝ տրանսֆորմատորից մինչև սպառիչի ԲՎ, որից հետո մինչև սպառիչ (PE) և (N) բաժանված են</p>

Անհրաժեշտ է, որ հողակցող սարքվածքի դիմադրությունը 0.4կՎ ցանցում լինի 4 Օմ-ից ոչ ավել

**ՈՒՐԱՆԿՅՈՒՆ ՀԱՏՈՒՅԹՈՎ ՀԱՂՈՐԴԱՉՈՂԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԵՐԿԱՐԱՏԵՎ
ՀՈՍԱՆՋԻ ԱՐԺԵՆՆԵՐԸ**

Չափերը, մմ	Պղնձե հաղորդածողեր				Ալյումինե հաղորդածողեր			
	հոսանքը, Ա, ըստ ֆազում կամ բևեռում ունեցած շերտերի թվի							
	1	2	3	4	1	2	3	4
15x3	210	-	-	-	165	-	-	-
20x3	275	-	-	-	215	-	-	-
25x3	340	-	-	-	265	-	-	-
30x4	475	-	-	-	365/370	-	-	-
40x4	625	-/1090	-	-	480	-/855	-	-
40x5	700/705	-/1250	-	-	540/545	-/965	-	-
50x5	860/870	-/1525	-/1895	-	665/670	-/1180	-/1470	-
50x6	955/960	-/1700	-/2145	-	740/745	-/1315	-/1655	-
60x6	1125/1145	1740/1990	2240/2495	-	870/880	1350/1555	1720/1940	-
80x6	1480/1510	2110/2630	2720/3220	-	1150/1170	1630/2055	2100/2460	-
100x6	1810/1875	2470/3245	3170/3940	-	1425/1455	1935/2515	2500/3040	-
60x8	1320/1345	2160/2485	2790/3020	-	1025/1040	1680/1840	2180/2330	-
80x8	1690/1755	2620/3095	3370/3850	-	1320/1355	2040/2400	2620/2975	-
100x8	2080/2180	3060/3810	3930/4690	-	1625/1690	2390/2945	3050/3620	-
120x8	2400/2600	3400/4400	4340/5600	-	1900/2040	2650/3350	3380/4250	-
60x10	1475/1525	2560/2725	3300/3530	-	1155/1180	2010/2110	2650/2720	-
80x10	1900/1990	3100/3510	3990/4450	-	1480/1540	2410/2735	3100/3440	-
100x10	2310/2470	3610/4325	4650/5385	5300/6060	1820/1910	2860/3350	3650/4160	4150/4400
120x10	2650/2950	4100/5000	5200/6250	5900/6800	2070/2300	3200/3900	4100/4860	4650/5200

(համարիչում նշված են փոփոխական հոսանքի, իսկ հայտարարում հաստատուն հոսանքի արժեքները)

**ՊՐԱՅԵ ԶՐԵՐՈՎ, ՌԵՏԻՆԵ ԵՎ ՊՈԼԿԻՆԻԼԵԼՈՐԻՂԱՅԻՆ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՍԲ
ՀԱՂՈՐԴԱԼԱՐԵՐԻ ԵՎ ԶՈՒՐԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԵՐԿԱՐԱՏԵՎ ՀՈՍԱՆՔԸ**

Հոսանատար ջղի հատույթը, մմ²	Հաղորդալարերի հոսանքը, Ա, անցկացված					
	բաց	մեկ խողովակում				
		երկու միաջիղ	երեք միաջիղ	չորս միաջիղ	մեկ երկջիղ	մեկ եռաջիղ
0,5	11	-	-	-	-	-
0,75	15	-	-	-	-	-
1	17	16	15	14	15	14
1,2	20	18	16	15	16	14,5
1,5	23	19	17	16	18	15
2	26	24	22	20	23	19
2,5	30	27	25	25	25	21
3	34	32	28	26	28	24
4	41	38	35	30	32	27
5	46	42	39	34	37	31
6	50	46	42	40	40	34
8	62	54	51	46	48	43
10	80	70	60	50	55	50
16	100	85	80	75	80	70
25	140	115	100	90	100	85
35	170	135	125	115	125	100
50	215	185	170	150	160	135
70	270	225	210	185	195	175
95	330	275	255	225	245	215
120	385	315	290	260	295	250
150	440	360	330	-	-	-
185	510	-	-	-	-	-
240	605	-	-	-	-	-
300	695	-	-	-	-	-
400	830	-	-	-	-	-

ԱՆՅՈՒՄԻՆԵ ԶՐԵՐՈՎ, ՌԵՏԻՆԵ ԵՎ ՊՈԼԻԿԻՆԻԼԵՆՈՐԻԴԱՅԻՆ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՍ ԶԱՂՈՐԴԱԼԱՐԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԵՐԿԱՐԱՏԵՎ ՀՈՍԱՔԸ

ՀՈՍԱՄԱՏԱՐ ԶՐԻ ՀԱՏՈՒՅԹԸ, ՄՄ ²	ՀԱՂՈՐԴԱԼԱՐԵՐԻ ՀՈՍԱՔԸ, Ա, ԱՆՅԿԱՑԿԱԾ					
	ԲԱՑ	ՄԵԿ ԽՈՂՈՎԱԿՈՒՄ				
		ԵՐԿՈՒ ՄԻԱՋԻՂ	ԵՐԵՔ ՄԻԱՋԻՂ	ՉՈՐՍ ՄԻԱՋԻՂ	ՄԵԿ ԵՐԿՁԻՂ	ՄԵԿ ԵՈԱՋԻՂ
2	21	19	18	15	17	14
2,5	24	20	19	19	19	16
3	27	24	22	21	22	18
4	32	28	28	23	25	21
5	36	32	30	27	28	24
6	39	36	32	30	31	26
8	46	43	40	37	38	32
10	60	50	47	39	42	38
16	75	60	60	55	60	55
25	105	85	80	70	75	65
35	130	100	95	85	95	75
50	165	140	130	120	125	105
70	210	175	165	140	150	135
95	255	215	200	175	190	165
120	295	245	220	200	230	190
150	340	275	255	-	-	-
185	390	-	-	-	-	-
240	465	-	-	-	-	-
300	535	-	-	-	-	-
400	645	-	-	-	-	-

Տուփախողովակներում և ճռռերում փնջերով անցկացված հաղորդալարերի և մալուխների երկարատև թույլատրելի հոսանքները պետք է ընդունվեն հաղորդալարերի համար՝ սույն բաժնի NN 4 և 5 աղյուսակներից՝ ինչպես խողովակներում անցկացված հաղորդալարերի համար, մալուխների համար՝ սույն բաժնի NN 6-8 աղյուսակներից՝ ինչպես օդում անցկացված մալուխների համար:

Խողովակներում, ճռռերում, տուփախողովակներում փնջերով անցկացված, միաժամանակ բեռնված 4-ից ավելի հաղորդալարերի դեպքում հաղորդալարերի համար հոսանքները պետք է ընդունվեն սույն բաժնի NN 4 և 5 աղյուսակներով՝ ինչպես բաց (օդում) անցկացված հաղորդալարերի համար՝ մտցնելով ցածրացնող գործակիցներ, այն է. 0.68՝ 5 և 6, 0.63՝ 7-9 և 0.6՝ 10-12 հաղորդալարերի դեպքում: Երկրորդային շղթաների հաղորդիչների համար ցածրացնող գործակիցներ չեն մտցվում:

2) Ճռռերում միաշառք անցկացված (ոչ փնջերով) հաղորդալարերի համար թույլատրելի երկարատև հոսանքներն անհրաժեշտ է ընդունել՝ ինչպես օդում անցկացված հաղորդալարերին:

Տուփախողովակներում անցկացված հաղորդալարերի և մալուխների թույլատրելի երկարատև հոսանքներն անհրաժեշտ է ընդունել սույն բաժնի NN 4-7 աղյուսակներից՝ ինչպես բաց (օդում), միայնակ անցկացված հաղորդալարերի և մալուխների համար՝ օգտագործելով սույն բաժնի N 12 աղյուսակի ցածրացնող գործակիցները:

Ցածրացնող գործակիցներն ընտրելիս վերահսկման և պահուստային հաղորդալարերը և մալուխները հաշվի չեն առնվում:

3) Սույն բաժնի N 6 աղյուսակում հոսանքները վերաբերում են ինչպես գրոյական ջրով, այնպես էլ առանց դրա հաղորդալարերին և մալուխներին, N 7 աղյուսակում նշված հոսանքները վերաբերում են քառաջիղ, N 8 աղյուսակում նշված հոսանքները վերաբերում են գրոյական ջրով կամ առանց դրա ջուրերին, հաղորդալարերին և մալուխներին, NN 9 և 10 աղյուսակներում հոսանքները վերաբերում են գրոյական ջրով և առանց դրա մալուխներին:

**Լարման տակ գտնվող հոսանքատար մասերից թույլատրվող
հեռավորություններ, մ**

Լարումը, կՎ		Հեռավորությունը մարդկանցից և նրանց կողմից օգտագործվող գործիքներից ու հարմարանքներից, ժամանակավոր ցանկապատերից (ս)	Հեռավորությունն աշխատանքային կամ տեղափոխման վիճակում գտնվող մեխանիզմներից, բեռնամբարձ մեքենաներից, առասաններից, բեռնակալիչ հարմարանքներից և բեռներից (ս)
	ՕԳ	0,6	1,0
մինչև 1 կՎ	մնացած էլեկտրա- կայանքներում	չի նորմավորվում (առանց հպման)	1,0
	1-35	0,6	1,0
	60, 110	1,0	1,5
	150	1,5	2,0
	220	2,0	2,5
	330	2,5	3,5
	400	3,5	4,5

Թույլատրվում է յուղային տրանսֆորմատորի ցանկացած փաթույթի երկարատև գերբեռնում, ճյուղավորման անվանական հոսանքի 5 %-ի չափով, եթե ճյուղավորման լարումը չի գերազանցում անվանականը: Բացի այդ, կախված աշխատանքի ռեժիմից, թույլատրվում են տրանսֆորմատորի կանոնադր գերբեռնումներ, որոնց չափը և տևողությունը սահմանվում է արտադրող կազմակերպության շահագործման հրահանգով:

Եթե արտադրող կազմակերպության շահագործման փաստաթղթերով վերապահված չեն ջերմաստիճանների այլ արժեքներ, ապա տրանսֆորմատորի և ռեակտորի անվանական բեռնվածքի դեպքում յուղի վերին շերտերում ջերմաստիճանը պետք է լինի՝

1) ԴՑ (ՃԼ) հովացումով՝ 75 °C-ից ոչ ավելի.

2) Մ (Մ) բնական յուղային հովացումով և Դ (Ճ) հովացումով՝ 95 °C-ից ոչ ավելի.

3) Ց հովացումով տրանսֆորմատորների յուղահովացուցիչի մուտքում յուղի ջերմաստիճանը չպետք է գերազանցի 70 °C

Օդի հարկադիր և յուղի բնական առույթյամբ (Դ տեսակի հովացում) տրանսֆորմատորների օդափոխիչների էլեկտրաշարժիչները պետք է ավտոմատ կերպով միացվեն՝ յուղի ջերմաստիճանը 55 °C հասնելիս, կամ անկախ յուղի ջերմաստիճանից բեռնվածքն անվանականին հասնելիս և անջատվեն՝ երբ յուղի ջերմաստիճանն իջել է մինչև 50 °C և բեռնվածքի հոսանքն էլ անվանականից պակաս է:

Վթարային ռեժիմներում տրանսֆորմատորի թույլատրելի գերբեռնվածքների տևողությունը և մեծությունը սահմանվում է արտադրող կազմակերպության շահագործման հրահանգով: Շահագործման մեջ գտնվող տրանսֆորմատորների համար, անկախ նախորդող բեռնվածքի տևողությունից ու արժեքից և հովացնող միջավայրի ջերմաստիճանից, բոլոր հովացման համակարգերի համար թույլատրվում է տրանսֆորմատորներն անվանական հոսանքը գերազանցող հոսանքով կարճատև գերբեռնելը հետևյալ սահմաններում՝

1) յուղային տրանսֆորմատորները՝

ա. գերբեռնվածքն ըստ հոսանքի՝ % 30 45 60 75 100,

բ. գերբեռնվածքի տևողությունը՝ րոպ 120 80 45 20 10.

2) չոր տրանսֆորմատորները՝

ա. գերբեռնվածքն ըստ հոսանքի՝ % 20 30 40 50 60,

բ. գերբեռնվածքի տևողությունը՝ րոպ 60 45 32 18 5.

3) չոր տրանսֆորմատորների թույլատրելի երկարատև գերբեռնումները սահմանվում են արտադրող կազմակերպության շահագործման հրահանգին համապատասխան: Հաղորդման ցանցի 110 կՎ և բարձր լարման տրանսֆորմատորների գերբեռնումների հարաչափերը պետք է ներկայացվեն էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորին՝ համաձայնեցման համար: